ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. ՝ 060-74-34-01

№ 741

16 օգոստոսի 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ, ՊԱՐՈՆ Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Մանուկյան*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 09.08.2021թ. մինչև 13.08.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան
Հեռ. ՝ 060-755-333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 255-Ա 10 օգոստոսի 2021 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 23.07.2021 թվականի թիվ 59-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված դիմումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ քաղաք Մարտունի Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման կմ 0+000-կմ5+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ կատարելու համար շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Հիմնանորոգման աշխատանքները կատարելու համար սահմանված տեղական տուրքի ՝ շինարարության թույլտվության վճարի նկատմամբ սահմանել զրոյական դրույքաչափ:

3.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությաը որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

10 օգոստոսի 2021 թվական
Ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 256-Ա

10 օգոստոսի 2021 թվական

# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացուն տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափով.

| Հ/Հ | Ազգանուն անուն, հայրանուն | Գումարը |
|---|---|---|
| 1. | Սամվել Համբարձումի Միերյան | 40000 |
| | Ընդամենը 40000 ( քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ | 40000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

10 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 257-Ա

"10 օգոստոսի 2021 թվական

# «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՆԴՐԱՆԻԿ ԽԼՈՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի 03.08.2021 թվականի №9 գրությունը, հաշվի առնելով, որ ՀՈԱԿ-ի աշխատակից Ա. Խլոյանը բարեխղճորեն կատարել է իր աշխատանքային պարտականությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. «Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի աշխատակից Անդրանիկ Խլոյանին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում 50000 ( հիսուն հազար ) դրամի չափով :

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնին կատարել վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

10 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 258-Ա

11 օգոստոսի 2021 թվական

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.05.2021 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Գ. ՉԻՐՈՅԱՆ ՓՈՂՈՑ 32 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 164-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1. Մարտունի համայնքի ղեկավարի 05.05.2021 թվական «Մարտունի քաղաքի Գ. Չիրոյան փողոց 32 հասցեի ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» թիվ 164-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները:

Որոշման 1.1 կետը լրացնել «Մարտունի քաղաքի Գ. Չիրոյան փողոցի 32 հասցեի ինքնակամ կառույցի համար նախատեսված ինքնակամ շինության վճարները չեն գանձվում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 8,58քմ մակերեսով պարիսպը և 24,52 քմ ներքին մակերեսով ավտոտնակը կառուցված է եղել 1985 թվականին, իսկ 11,65 քմ ներքին մակերեսով պատշգամբը, 27,85քմ ներքին մակերեսով անասնաշենքը, 8,52քմ մակերեսով պարիսպը և 132,21քմ ներքին մակերեսով բնակելի տունը կառուցված է եղել 2000 թվականին» բառերով և թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

11 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 259-Ա , 11 օգոստոսի 2021 թվական

# ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33/1 ՀԱՍՑԵԻ 05-003-0450-ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00010 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով .

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 33/1 հասցեի 05-003-0450-ծածկագրով 0,00010 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին հատկացնել ք.Մարտունի, Մյասնիկյան փողոց թիվ 33/1 հասցեն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

11 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 260-Ա 11 օգոստոսի 2021 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 23.07.2021 թվականի թիվ 59-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված դիմումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ քաղաք Մարտունի Մ-10, Սայաթ-Նովա փողոցի ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ կատարելու
համար շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Հիմնանորոգման աշխատանքները կատարելու համար սահմանված տեղական տուրքի՝ շինարարության թույլտվության վճարի նկատմամբ սահմանել զրոյական դրույքաչափ:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությաը որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

11 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 261-Ա

13 օգոստոսի 2021 թվական

# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006 թվականի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանի 11-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի սեպտեմբերի 17-ի համար հայտարարել մրցույթ Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնի համար.

1.1 Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի առաջին կարգի մասնագետ ( ծածկագիր՝ 3.2-5) :

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին սույն որոշման մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

13 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի